

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ (1915 Թ.) ՎԵՐԱԴՐԱԾ ՌՈՍԼԻՆՅԱՆ ԵՐԿՈՒ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Լուսինե Թումանյան

Հայկական մշակութային ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ ունեն ձեռագիր մատյանները, որոնք տարբեր ժամանակաշրջաններում ընկալվել են և՛ որպես սուրբ մասունք, և՛ որպես գիտության աղբյուր, իսկ ներկայումս՝ նաև որպես արվեստի ստեղծագործություն: Քիչ չեն այն ձեռագրերը, որոնց վիճակված է եղել կիսել իրենց ստեղծողների ճակատագիրը՝ դառնալով ականատեսները հայոց պատմության և՛ խաղաղ, և՛ պատերազմական օրերի: Այդպիսի ձեռագրերից են հայ մանրանկարչության նշանավոր ներկայացուցիչների մեկի՝ Թորոս Ռոսլինի սույն հոդվածում քննվող Ավետարանները, որոնց գաղթի ճանապարհի որոշ, ցայժմ անհայտ ճշգրտումներ կներկայացնենք ստորև:

Աղթամարի վանքում որպես սրբություն պահված և այնտեղից Մեծ Եղեռնի ժամանակ փրկված ձեռագրերից է **Թորոս Ռոսլինի «դաշունահար» Ավետարանը** (Մատենադարան, ձեռ. 5458), ձեռագիր, որ անցել է հետաքրքիր մի ճանապարհ:

Ձեռագրի թերթերին պահպանված գրչության հիշատակարանը վկայում է, որ «այս աստվածախոս, աստվածունակ, երկրպագելի և պաշտելի սուրբ Ավետարանն» ընդօրինակվել է 1266 թ., Կիլիկյան Հայաստանի Հռոմկլա քաղաքում: Ձեռագրի մագաղաթյա թերթերը գրված են համաչափ և գեղեցիկ երկաթագրով, նկարազարդված են ոսկեզօծ լուսանցազարդերով և զարդագրերով²: Ձեռագրի պատվիրատու-ստացողը Հայոց Հեթում Ա. արքան էր. «Շնորհիւ Տեառն սկսեալ եւ ողորմութեամբ նորին յանգ ելեալ աւարտեցաւ մատեանս այս աստուածախաւս, աստուածունակ, երկրպագելի եւ պաշտելի Սուրբ Աւետարանս, յամի եւթն հարիւր եւ հինգետասաներորդի (1266 թ.) թուաբերութեանս Հայկազեան տումարի,

¹ Սույն ձեռագրի փրկության մասին տես նաև մեր հոդվածը Արարատյան հայրապետական թեմի «Շողակն» երկշաբաթաթերթում, 2015 թ., սեպտեմբեր, Ա, թիվ 15 (363), էջ 5:

² Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտություն (IX-XIX դդ.), Գահիրե, 1998, էջ 224:

յաստուածապահ դղեակա եւ յաշխարհամուտ աթոռս Հռոմկլա, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչին եւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ի հայրապետութեան աստուածապատիւ տեսոն Կոստանդեայ կաթողիկոսի, որ եւ զսրբազան վարուցն իւրոյ անհամեմատ ունէր զմաքրութիւն, հրամանաւ եւ ծախսիք աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ»¹:

Գեղագիր և շքեղ նկարագարողումներով այս գրչագիրը կտրատվել և թրատվել է Մեծ եղեռնից դեռևս մի քանի հարյուր տարի առաջ անօրեն և այլադավան թշնամու ձեռքով: Ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը, ուսումնասիրելով այս ձեռագրի անցած պատմությունը, նշում է, որ այն «-Մատենադարան է մուծվել Աղթամարից բերված ձեռագրերի հետ Մեծ եղեռնի տարում, սակայն իր եղեռը ապրել է դրանից ուղիղ հինգ հարյուր տարի առաջ՝ 1400 թ., Լենկ-Թեմուրի երրորդ աշխարհավեր արշավանքի ժամանակ»²: Ամբողջական Ավետարանից պահպանվել են միայն 39 դաշունահար թերթեր: 15-րդ դարասկզբին, Վասպուրականում Հովհաննես քահանան, տեսնելով փառահեղ Ավետարանից մնացած դաշունահար մասունքները, որոշում է պահպանել դրանք: Նա մի նոր ձեռագիր է ընդօրինակում՝ մեջը համապատասխանաբար տեղադրելով մագաղաթյա թերթերը³: Նորոգման իր հիշատակարանում Հովհաննես քահանան գրում է, որ Ավետարանն ահարկու և սոսկալի վիճակում էր, այնպես էր մասնատված և թրատված թշնամու ձեռքով, ինչպես գառն է հոշոտվում գայլերի կողմից «զայսպիսի ահարկու եւ սոսկալի Աւետարանս այսպէս փեռակտած անկեալ ի ձեռս այլազգեաց, որպէս գառն ի գայլոյ ձեռն մատնեալ»⁴: Ուստի պատահական չէ, որ Ավետարանը կրում է «դաշունահար» Ավետարան անվանումը:

Դարեր անց սուրբ ձեռագիրը կրկին հայտնվում է մահմեդականների ձեռքին, սակայն 1900 թ. ոմն Պետրոս Հակոբյան այն գերությունից ա-

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմ.՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 334. Ա. Մաթևոսյանը հիմնավորել է, որ Մատենադարանի հմր. 1454 պատառիկը սույն ձեռագրի թերթից է և հանդիսանում է հիշատակարանի շարունակությունը:

² Ա. Մաթևոսյան, Հեթում Ա թագավորի Ռոսլինյան Ավետարանի նորահայտ մասունքները, Բանբեր Մատենադարանի, հմր. 13, Երևան, 1989, էջ 275:

³ Նույն տեղում, էջ 281-282:

⁴ ՄՄ, ձեռ. 5458, 100ա:

զատում է¹: Այնուհետ Ավետարանը պահվել է Աղթամարի վանքում: 1915-1916 թթ., երբ Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի (1911-1930) ցուցումով Լիմի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանը, Կտուցի միաբան Ստեփան վարդապետը, Աղթամարի միաբան Դանիել վարդապետ Զադոյանը և պատմաբան Սմբատ Տեր-Ավետիսյանը Վասպուրականում ձեռագրեր էին հավաքում, այս Ավետարանը ևս փրկվում է և տեղափոխում է Սբ. Էջմիածին, իսկ այնտեղից՝ Մաշտոցի անվան Մատենադարան² որպես Ռուսլինյան արվեստի մի շքեղ նմուշ³:

Նմանատիպ մի ճանապարհ է անցել այս հաղորդման մեջ ներկայացվող հաջորդ Ավետարանը, որը նույնպես ունի իր անվանումը՝ **Ձեյթունի Ավետարան**: Ձեյթունի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 10450) ստեղծվել և պահվել է Կիլիկյան Հայաստանի արքայանիստ և կաթողիկոսանիստ պալատներում, առանձին հոգացության արժանացել հայ ազնվատոհմիկ գերդաստաններում, ընկալվել սուրբ և համարվել մասունք՝ բարեպաշտ ժողովրդի համար, իսկ Մեծ Եղեռնի օրերին անցել կոտորածի ու գաղթի ճանապարհով⁴:

Թորոս Ռուսլինն այն ընդօրինակել և նկարագարդել է 1256 թվականին, Կիլիկյան Հայաստանի Հոմմկլա բերդաքաղաքում: Ձեռագիրը գրված է մագաղաթի վրա՝ մասամբ երկաթագրով, մասամբ բոլորգրով⁵: Առաջին թերթերը խորաններ են, որոնք մեզ են ներկայացնում Հոմմկլայի գրչության և մանրանկարչության դպրոցի գեղեցկագույն նմուշներ⁶: Խորաններից բացի հիացնում են նաև չորս ավետարանիչների շարժուն պատկերները: Մատյանի գրեթե բոլոր թերթերը նկարագարդված են լուսանցային գունագեղ և բազմատեսակ մանրանկարներով, մեծադիր և նրբին զարդագրերով՝ գծված ոսկի, կապույտ, կարմիր, կանաչ և այլ ե-

¹ ՄՄ, ձեռ. 5458, 2ա:

² **Լ. Թումանյան**, Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները, Երևան, 2019, էջ 300-305:

³ Սույն ձեռագրի փրկության մասին տես նաև մեր հոդվածը Արարատյան հայրապետական թեմի «Շողակն» երկշաբաթաթերթում, 2016 թ., ապրիլ, Բ, թիվ 7 (377), էջ 8:

⁴ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ., կազմ.՝ Ա. Մալխասյան, Երևան, 2007, էջ 42: Ա. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 223:

⁵ Սույն ձեռագրի նկարագարդման և փրկության պատմության մասին տես Օ. Քեշիշյան, Թորոս Ռուսլինի «Ձեյթունի Ավետարանը» և նրա փրկության պատմությունը, «Էջմիածին» ամսագիր, 2018, է, էջ 101-114:

րանգներով: Ծաղկողի ճաշակն ու երևակայությունը, գույների ներդաշնակությունը, պատկերների նրբաոճությունն այս ձեռագիրը դարձրել են հայ մանրանկարչության մեջ եզակիի համարում ունեցող մի գործ:

Մատյանի պատվիրատուն Հայոց Կոստանդին Ա Բարձրբերդցի հայրապետն է (կթղ. 1221-1267), ում մասին Ռոսլինը ձեռագրի գլխավոր հիշատակարանում գրում է, թե իր զարմանահրաշ և մաքուր վարքով հիացնում էր բոլորին, բարիքների աղբյուր էր, որբերի հայրն էր և հոգում էր աղքատների մասին, առաջնորդում էր Եկեղեցին առաքելական կանոններով և այնքան սիրելի էր բոլորին, որ անգամ օտար բռնավորներն էին նրան պաշտում¹:

Դժվար է ասել, թե Կոստանդին Բարձրբերդցի հայրապետից հետո այս թանկագին ձեռագիրը ո՞ւմ է պատկանել: Ինչ որ պահից սկսած այն պահվել է Ջեյթունի Սուրենյան-Բասիլոսյան գերդաստանում: Ձեռագրի ճակատագիրը մեզ հայտնի է Արտավազդ Եպիսկոպոս Սուրմեյանի ձեռագրացուցակից, ուր տրված է ձեռագրի նկարագրությունը և մարաշցի հայտնի բժիշկ Հարություն Տեր-Ղազարյանի նամակը՝ գրված Սուրմեյանին 1936 թ. օգոստոսի 1-ին²:

Բժիշկ Տեր-Ղազարյանն իր նամակում պատմում է հետևյալը: Ջեյթունցիների պնդման համաձայն Սուրենյան-Բասիլոսյան տոհմի ավագը՝ Ասատուր աղան, Ավետարանը հանձնել է Ջեյթունի Միջնաբերդի Սուրբ Աստվածածին եկեղեցուն՝ շարունակելով մնալ ձեռագրի տերն ու պահապանը: 1915 թ. կոտորածի օրերին Ջեյթունի Սուրենյան-Բասիլոսյան և Ասմնյան իշխանական տները ապաստանում են Մարաշում՝ իրենց հետ տանելով սուրբ ձեռագիրը: 1916 թ. գարնանը Թալեաթից հրաման է գալիս դեպի Դեր-Չոր անապատը տեղահանել Մարաշի հայությանը: Մարաշցի բժիշկ Հարություն Տեր-Ղազարյանը, նախապես տեղեկացված լինելով տեղահանության ծրագրի մասին, Ասատուր աղայից խնդրում է Ավետարանը, ամեն ջանք թափում համոզելու իշխանին, որ իրեն հանձնի այն: «Այդ հինաուրց Ջեյթունի իշխանական տունը գաղթած էր ոչնչանալու համար Տեր-Չորի ճամբուն վրայ, իսկ Բարձրբերդցիի սքանչելի Աւե-

¹ ՄՄ, ձեռ. 10450, 403ա-404ա:

² Մայր Յուզակ հայերէն ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու մասնաւորաց, Բ. Հատոր, կազմ.՝ Արտաւազդ արքեպս. Սիւրմէան, Հալէպ, 1936, 37:

տարանը մնաց Մարաշ», գրում է բժիշկը¹: 1920 թ., երբ թուրքերը հարձակվում են Մարաշի վրա, բժիշկն իր երկու քույրերի հետ փախչում է՝ տանելով Ավետարանը: Ձեռագիրը ճանապարհին ընկնում է, և կրակոցների տարափի տակ հնարավոր չի լինում այն վերցնել:

Այդ դեպքից օրեր անց մի թուրք ներկայանում է Մարաշի առաջնորդ Խաչատուր վարդապետ Տեր-Ղազարյանին և նրան վաճառում Ավետարանը: Բժիշկն իր նամակում այսպես է պատմում. «Այս դեպքերէն յետոյ, օր մը թուրք մը կը ներկայանայ Մարաշի այդ ատենուան հայոց Առաջնորդին՝ Խաչատուր վրդ. Տեր Ղազարեանի, և անոր կը յանձնէ Աւետարանը՝ ասելով, թէ կրկնակի երազներու մէջ իրեն կը յանձնարարուէր որ անմիջապէս այս գիրքը յանձնէր Էրմէնի Մուրախիսասին (իմա՛ հայ հոգևորականի). և ահա այդ երազներու հետևելով բերած էր. ալ ինքը գիտէ փոխան նուէրի իր տալիքը: Խաչատուր վարդապետ քսան երկու մէծիտ տալով թիրքին կ'ազատէ Բարձրբերդցիի այս հոյակապ թանկարժէք ազգային գանձը»²: Համաձայն Սուրմեյանի նկարագրության՝ 1936 թվականին ձեռագիրն ուներ 408 թերթ, որոնցից չորսը՝ ավետարանիչների մանրանկարներով, իսկ տասնվեցը՝ խորաններով և համաբարբառով:

Ի վերջո, Ավետարանը հանգրվանում է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանում: 1969 թ. Կ.Պոլսի հայոց պատրիարք Շնորհք եպիսկոպոս Գալուստյանի և Ամենայն Հայոց Վազգեն Ա Վեհափառի (կթղ. 1955-1994) նախաձեռնությամբ Ավետարանը նվիրաբերվում է Մաշտոցի անվան Մատենադարանին³:

Այժմ փորձենք հասկանալ, արդյո՞ք Վեհափառի բերած Ավետարանը և Ջեյթունի Ավետարանը նույն ձեռագիրն են, թե ոչ: Ըստ մեզ, մենք գործ ուենքն նույն Ավետարանների հետ, քանի որ Ա. Սուրմեյանի Ցուցակում տեղ են գտել ձեռագրի ինչպես գրչության ժամանակի, այնպես էլ հետագայի (16-րդ դ., 1806 թ., 1852 թ., 1859 թ.) հիշատակարանները համընկնում են ձեռագրում եղած հիշատակարանների հետ⁴:

Ձեռագրի մեջ պահպանվել են չորս ավետարանիչների պատկերները և չորս խորան (ընծայականը, Եվսեբիոսի նամակը Կարպիանոսին):

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ., էջ 8:

⁴ Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու մասնատրաց, էջ 139-142:

Փաստորեն, տասնվեց խորաններից բացակայում են տասներկուսը: Ընդամենը մի քանի տարի առաջ պարզվեց, որ ձեռագրի ութ խորան պատկերող թերթերը մեզ անհայտ մարդկանցից գնել է Փոլ Գեթթիի թանգարանը (ԱՄՆ), ուր և այժմ պահվում են (ձեռ. 59): Մնում է անհայտ ևս չորս խորան պատկերող թերթերի ճակատագիրը: Ե՞րբ և ո՞ւմ ձեռքով են Ավետարանից առանձնացվել հայ մանրանկարչական արվեստի այդ նմուշները. այս հարցը դեռ կարոտ է ուսումնասիրության:

Այսպիսով, վերը քննված այս երկու Ավետարանների օրինակով, հերթական անգամ եզրահանգում ենք, որ Մեծ եղեռնի ազգասպան ու մշակութասպան օրերին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, հսկության՝ հաճախ արդյունավետ, իր ծրագիրը:

Բանալի բառեր: Թորոս Ռոսլին, ձեռագիր, մագաղաթյա, մանրանկարչություն, Ավետարան, Մեծ եղեռն, Աղթամար, Ջեյթուն, Կիլիկիան Հայաստան:

О ДВУХ РОСЛИНСКИХ ЕВАНГЕЛИЯХ ПЕРЕЖИВШИХ ГЕНОЦИД АРМЯН (1915)

Лусине Туманян

Ключевые слова: Торос Рослин, рукопись, пергамент, миниатюра, Евангелие, геноцид, Ахтамар, Зейтун, Киликийская Армения.

Это статья о двух рукописях, написанные и иллюстрированные известным армянским миниатюристом Торосом Рослином, и пережившие армянский геноцид. Оба являются Евангелиями по содержанию. Один был написан в 1266 году, в городе Хромкле в Киликийской Армении, для армянского царя Хетума. Во время нашествий Ленка Темура эта рукопись была рассечена мечом. В 15 веке священник по имени Иоанн нашел оставшиеся 39 страниц рукописи, скопировал другую рукопись и ставил эти 39 страниц в ней. Позже рукопись хранилась в монастыре Ахтамар, откуда она была спасена во время геноцида (1915 г.) и перенесена в Эчмиадзин, а сейчас хранится в Матенадаране имени Маштоца (рукопись 5458).

Другая рукопись, известный как Евангелие Зейтуна, был написан и иллюстрирован Торосом Рослином в 1256 году, в Хромкле. Позже она, как важная святыня сохранился в Зейтуне. Во время геноцида (1915 г.) рукопись появилась в пустыне Дер Зор, затем была спасена одним турком и продана армянскому духовному настоятелю Мараша. Позже рукопись хранился в Армянский Патриархат

Константинополя, а в 1969 г. была перенесена в Матенадаран имени Маштоца (рукопись 10450) Вазгеном католикосом.

ABOUT TWO ROSLIN GOSPELS SURVIVED THE ARMENIAN GENOCIDE (1915)

Lusine Tumanyan

Key Words: *Toros Roslin, manuscript, parchment, miniature, Gospel, genocide, Akhtamar, Zeytun, Cilician Armenia.*

This is an article about two manuscripts written and illustrated by the famous Armenian miniaturist Toros Roslin and survived the Armenian genocide. Both are gospels in content. One was written in 1266, in Hromkla in Cilician Armenia, for the Armenian king Hetum. During the invasions of Lenka Temur, this manuscript was cut with a sword. In the 15th century, a priest named Hovhannes found the saved 39 pages of the manuscript, copied another manuscript and put those 39 pages in it. Later, the manuscript was kept in the Akhtamar monastery, from where it was rescued during the genocide (1915) and transferred to Echmiadzin, and now it is kept in the Matenadaran named after Mashtots (manuscript 5458).

Another manuscript, known as the Gospel of Zeitun, was written and illustrated by Toros Roslin in 1256, at Hromkla. Later it, as an important holiness, was preserved in Zeytun. During the genocide (1915), the manuscript appeared in the Der Zor desert, then was rescued by a turkish man and sold to the Armenian spiritual abbot Marash. Later the manuscript was kept in the Armenian Patriarchate of Constantinople, and in 1969 it was transferred to the Matenadaran named after Mashtots (manuscript 10450) by Vazgen Catholicos.